ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Քաղաքականություն

## ԵՄՀ Գիտահետազոտական գործունեության խրախուսման

2021

WWW.EIU.AM

| | |
|---|---|
| Վերնագիր | ԵՄՀ Գիտահետազոտական գործունեության խրախուսման քաղաքականություն |
| Համար | ԵՄՀ/ՔԿ-ԿԳ-06-01 |
| Հաստատման ամսաթիվ | |
| Հաստատող մարմին | Կառավարման խորհուրդ |
| Քաղաքականության նպատակը | Սահմանել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների Գիտահետազոտական գործունեության որակական բարելավման քաղաքականությունը, ուղենիշները և շրջանակը |
| Քաղաքականության դրույթները | 1. Պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և մագիստրանտների հետազոտական օրակարգը կապակցել ազգային (ՀՀ Գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թթ. գերակայությունները), ինչպես նաև «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» փաստաթղթում ամփոփված նպատակներին և այդ համատեքստում ՀՀ առաջնահերթություններին<br>2. Գիտահետազոտական աշխատանքների քանակական գնահատումը զուգահեռել որակական վերլուծություններով՝ դրանք ծառայեցնելով վերապատրաստումների կարիքի գնահատմանը<br>3. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական, ասպիրանտական թեզերի թեմաները ուղղել վերոհիշյալ փաստաթղթերով սահմանված գիտահետազոտական առաջնահերթություններին<br>4. Ապահովել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կազմումը՝ վերափոխված պահանջներին և կառուցվածքին համապատասխան՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հետազոտական մեթոդաբանությանը<br>5. Խրախուսել միջազգային համագործակցությունը և ասպիրանտական համատեղ ծրագրերի իրականացումը՝ ապահովելով հետազոտության միջազգայնացումը<br>6. Մասնագիտական հետազոտական մեթոդների կատարելագործումը, ակադեմիական |

| | |
|---|---|
| | բարեվարքության ապահովումը համարել առանցքային՝ գիտահետազոտական աշխատանքների որակական բարելավման նպատակով<br>7. Ցուցաբերել ընթացիկ աջակցություն լաբորատորիաների հետ համագործակցության և արդյունաբերության հետ համատեղ հետազոտությունների իրականացման հարցում<br>8. Խրախուսել միջդիսցիպլինար և միջգիտակրթական գիտահետազոտական ծրագրերը՝ ստեղծելով բավարար նախապայմաններ<br>9. Ապահովել ընթացիկ աջակցություն, ինչպես ֆինանսական, այնպես է կարողությունների զարգացման ուղղությամբ<br>10. Տրամադրել բավարար ֆինանսական միջոցներ գիտահետազոտական աշխատանքների խրախուսման համար.<br>• Տրամադրել ներբուհական դրամաշնորհներ։<br>• Խրախուսել Web of Science կամ Scopus շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում (հեղինակների կամ համահեղինակների մասնակցությամբ) հոդվածի հրապարակումը։<br>• Խթանել ԲՈԿ-ի կողմից հաստատված հրատարակություններում, հատկապես՝ ԵՄՀ Բանբերում հրատարակումը (որի պահանջները վերափոխվել են և համապատասխանեցվել միջազգային չափորոշիչներին)։<br>• Տրամադրել նպատակային անվճար ասպիրանտական տեղեր՝ ԵՄՀ կողմից սահմանված գիտական առաջնահերթությունների ուսումնասիրման և ուսումնական գործընթացներում արտահայտելու նպատակով։ |
| • **ում է վերաբերվում քաղաքականություն**<br>• **խախտողների պատասխանատվությունը** | Ավարտական տարիների ուսանողներ, մագիստրանտներ, ասպիրանտներ, պրոֆեսորադասախոսական կազմ |
| **Առնչվող այլ աստաթղթերի ցանկ** | • ՀՀ Գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թթ. գերակայությունները<br>• «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030»<br>• ԵՄՀ գերակա գիտահետազոտական թեմաներն ըստ մասնագիտությունների |

| | |
|---|---|
| **Քաղաքականության ներդրմանն առնչվող կարգեր, ընթացակարգեր** | • Ռեկտորի հրաման N1-01/21Ն (Գիտահետազոտական աշխատանքների խրախուսման նպատակով պարգևատրման սահմանաչափերը հաստատելու մասին)<br>• Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգ<br>• Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների կարգ<br>• Բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության ուղեցույց<br>• Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ<br>• ԵՄՀ հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգ<br>• Հետազոտությունների հրատարակման և հրապարակայնեցման կարգ |
| **Քաղաքականության իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումները** | Հետազոտական ինկուբատոր |
| **Քաղաքականության վերանայման պարբերականությունը** | Ըստ անհրաժեշտության |
| | |